


ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը մասնակցել է Ջավեն Վարդանյանի ծննդյան 90-ամյակին նվիրված երեկոյին

23.12.2013



Ս/թ դեկտեմբերի 21-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանի մասնակցությամբ Արամ Խաչատրյան տուն թանգարանի դահլիճում տեղի է ունեցել Ջերմուկի քաղխորհրդի գործկումի նախկին (1964-1985թթ.) նախագահ, Ջերմուկի պատվավոր քաղաքացի Ջավեն Գևորգի Վարդանյանի ծննդյան 90-ամյակին նվիրված երեկո: Երեկոյին ելույթներ են ունեցել Ջավեն Վարդանյանի գործընկերները, հարազատները, համաքաղաքացիները:

Մարզպետ Էդգար Ղազարյանը ելույթի իր խոսքում կարևորել է Ջավեն Վարդանյանի դերը Ջերմուկի զարգացման գործում և բարձր է գնահատել նրա անձնական նվիրումն ու գործունեության ընթացքում արձանագրված հաջողությունները:

Երեկոն համեմված է եղել նաև մշակութային ծրագրով: